

**041301.01.6 «ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (ԸՍՏ ՈԼՈՐՏԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ  
ՔՆՆՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԱՆՅԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

Դիմորդը պետք է լինի զարգացած, կազմակերպչական ընդունակություններով օժտված անձ: Հատկապես արժևորվում է նրա ինքնատիպ մտածելակերպը և տրամաբանական եզրահանգումները:

Կարևորվում է նաև դիմորդի ընդհանուր գիտելիքները մշակույթի տարբեր բնագավառների շուրջ (թատրոն, կինո, երաժշտություն, կերպարվեստ, պարարվեստ):

Դիմորդը դպրոցական ծրագրերի սահմաններում պետք է ծանոթ լինի Հայ մշակույթի պատմությանը, Հայ եկեղեցու պատմությանը, ինչպես նաև հայ գրականության լավագույն ստեղծագործություններին:

Դիմորդները մասնագիտական քննություն են հանձնում հետևյալ առարկայից:

**Քննություն - «ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» (գրավոր և բանավոր)**

Քննությունը բաղկացած է երկու փուլից, որն անցկացվում է նույն օրը: Դիմորդին մեկ ակադեմիական ժամի ընթացքում, հանձնարարվում է ազատ թեմայով շարադրություն (որևէ գեղարվեստական գործի մշակում, անվանի գործչի դիմանկար, ներկայացման, կինոֆիլմի, ինչպես նաև մշակույթի բնագավառում տեղ գտած որևէ երևույթի յուրովի մեկնաբանում): Այստեղ բացահայտվում է դիմորդի զարգացվածությունը, ինչպես նաև, ընտրած թեման վերլուծելու ունակությունները:

Աշխատանքն ավարտելուց հետո այն հանձնվում է հանձնաժողովին, որը գրավոր աշխատանքներին ծանոթանալուց հետո դիմորդի հետ անց է կացնում հարցազրույց՝ գրված թեմայի շուրջ:

Գրավոր աշխատանքը և հարցազրույցը գնահատվում է մեկ ընդհանուր գնահատականով:

**ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. Աղաբաբյաբ Ս.Արդիի հայ գրականության պատմություն, հ.1, Երևան, 1993:
2. Աղասյան Ա., Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX-րդ դարերում, Երևան, Ոսկան Երևանցի հրատ., 2009:
3. *Գալստյան Տ. «Հայացք մեր կինոյին. Պատմությունը և ներկան»*, Երևան, 2011:
4. Գյոդակյան Գ., Էջեր հայ երաժշտության պատմությունից, Երևան, 2009:
5. Կուզմինա Մ.Տ., Մալցեվա Ն.Լ. Արտասահմանյան արվեստի պատմություն, Երևան, Զանգակ-97, 2003:
6. Սողոմոնյան Ս., Արտասահմանյան գրականության պատմություն, Երևան, 1981.

**«ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (ԸՍՏ ՈԼՈՐՏԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

**քննություն - «ՍՈՑԻԱԼ - ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ»  
(գրավոր և բանավոր)**

1 – 7 միավոր - Դիմորդի գրավոր աշխատանքն ավարտված չէ, գուրկ է սեփական մտածելակերպից, գրված է անփույթ, սխալներով: Չի կարողանում բանավոր հիմնավորել իր մտքերը:

8 – 12 միավոր - Դիմորդը չի կարողացել ավարտել գրավոր աշխատանքը, սակայն հարցազրույցի ժամանակ կարողանում է որոշակի տեղեկություններ տալ նյութի շուրջ:

13 – 17 միավոր - Դիմորդը ներկայացել է հետաքրքիր, հիմնականում ավարտուն աշխատանք, որտեղ փորձել է ամփոփել իր մտքերը: Հարցազրույցի ժամանակ ձգտում է հիմնավորել ընտրած թեման:

18– 20 միավոր - Դիմորդը ներկայացրել է գրագետ լեզվով գրավոր աշխատանք, որտեղ հանդես է բերել ընտրած թեմայի ինքնուրույն մեկնաբանումը: Ունի ինքնատիպ մտածելակերպ և վառ ստեղծագործական երևակայություն: